

ծառի վրայ նստած, սիրուն կերպով ծլվում են, ասում են, որ նրանք էլ «ծուներ են անում»:

Երրորդութեան մասին քրիստոնէական հայացքը համշէնցի հայր ոչ գիտէ և ոչ էլ խելքը կը մտնէ: Նա ուղղակի մի Աստուած է ճանաչում՝ իրրեւ բնութեան Արարիչ, առանց որեւէ անձերի: Քրիստոսին թէւ ընդունում, պաշտում է, բայց ոչ իրրեւ Արարիչ, ոչ իրրեւ Աստուած՝ այլ իրրեւ Նրա Որդին, Ներանից փոքրը, աւելի մարդկանց գործերը դատող և նրանց մեղքերը բաշխող: Բնութիւնը Արարչի ձեռքի գործն է համարում, իսկ մարդկանց չարն ու բարին, նրանց մեղքերը — Քրիստոսին է բաժին հանում: Սուրբ Հոգուն ոչինչ չի մնում, համշէնցի հայր նրան չի էլ ճանաչում. թէւ «յանուն Հօրի» մէջ միշտ կրկնում է Նրա անունը: Կրկնում է՝ բայց չի հասկանում: Մէկ անգամ նրանցից մէկին հարցնում եմ՝ թէ ի՞նչ է հասկանում «յանուն Հօրի» խօսքերից: Նա մոլորուած կանգնում, ասում է, որ ոչինչ չի հասկանում. ասում է Հէնց այնպէս, որովհետեւ սովորութիւն է. վերջը միամտաբար աւելացնում է՝ իրրեւ ուզում է ասել, թէ Հօր Աստուծու Որդին սուրբ Հոգին է...

Դժբախտաբար նրանց լեռների, քարերի, աղբիւրների ու ծառերի պաշտամունքի մասին ոչինչ չեմ կարող ասել, քանի որ Կովկասեան ափերում նրանք հանդիսանում են իրրեւ գաղթական տարր և ոչ իրրեւ երկրի բնիկներ, որ մօտիկ կապեր հաստատած լինէին երկրի բնութեան, նրա սարերի և ձորերի, նրա ծառերի ու ջրերի հետ: Մնում է բաւականաճալ այն աւանդութիւններով ու նախապաշարմունքներով, որ բերել են նրանք իրանց հետ Հայրենական ափերից, և որոնք վերարեւում են բնութեան տարրերին ու երեւոյթներին և այն կենդանիներին ու բոյսերին, որոնք իրանց այժմեան նոր տեղերում էլ կան:

II. Երկնքի լուսատուներ եւ բնութեան երեւոյթներ.

Լուսինն ու արեւը, ինչպէս որ շատ տեղի ժողովրդի մէջ, սրանց մօտ էլ անմարմին ու անշունչ չեն ճանաչում: Սրանք էլ են ընդունում նրանց իրրեւ Հոգի ունեցող, շնչաւոր արա-

րաճներ: Սրանց մամերն էլ լուսնեակէն և արևին իրար քօլը-
 եղբայր են ճանաչում, լուսնեակը տշայ, արևն՝ աղջիկ: Լուսինը
 մեծ դեր է կատարում գիւղացու կեանքում. նրա հաշիւը նրան
 գուցէ ժամանակի ամսաթւից աւելի է պէտք գալիս: Նա լուս-
 նի օրերի հաշիւը այնպէս գիտէ, ինչպէս ամս: օրերէնը, իսկ
 անգրագէտը հօ լուսնի հաշիւը աւելի հեշտ է պահում մտքում,
 քան ամսի հաշիւը: Ամսի հաշիւը հարկաւորում է նրանց գու-
 ցէ միայն նրա համար, որ իմանան, թէ երբ է պատը կամ
 իրանց մէջ շատ լայտնի տօնը և կամ սրբի օրը: Քայց պատն
 ու սրբի օրը իմացնելը քահանայի պարտականութիւնն է. նրա-
 նից կիմանան եկեղեցում. դրա համար ինչ գլուխ ցաւեցնեն:
 Միջոցաւ կեանքում, ամեն քայլում, նրանց հարկաւոր է գալիս
 գիտենալ, թէ այս ինչ գործը երբ և ինչ ժամանակ սկսել, որ
 լաւ լինի և աջող դնայ: Լաւն ու վատը կախուած է լուսնի
 հաշիւից, այդ հաշիւը մեծ ազդեցութիւն ունի գործի ապագայի
 վրայ: Վան չար ու բարի օրեր, ամէն գործի համար «Ուստ
 գալու սհաթ» կայ. լաւ և վատ. դրանց ուղեցոյցը լուսնի
 հաշիւն է:

Լուսնի օրերն է համրում գիւղացին՝ ցանք սկսելիս, ծառ
 տնկելու և պատուաստելու ժամանակ, ճանապարհ դնալիս,
 երազ տեսնելիս, նոր գործ կամ առուտուր անելիս և հարսա-
 նիք սկսելիս, պսակի վրայ էլ ազդեցութիւն ունի լուսնի որ
 երորդ օրը լինելը: Լուսնի օրերի հաշուով հետաքրքրւում է
 ժողովրդի մեծամասնութիւնը: Չատ անգամ և շատ շատերն
 են դիմել ինձ լուսնի քանի երրորդ օրն իմանալու:

Ուհասարակ նոր լուսինն աւելի լաւ է համարւում, քան
 կէսն անցածն ու հինը. լուսնի օրերի հաշուի մէջ երեք հատ
 ինը կայ. այդ երեքն էլ վատ են (9. 19. 29.) այդ օրերին
 ոչ ցանք են անում և ոչ հարսանիք. լաւ չէ:

Լուսնի նորած ժամանակին էլ ցանք չեն անել. լաւ չէ.
 չի բուսնիլ, կը չօրնայ:

Լուսնի նորին թուխս դնելը նոյնպէս լաւ չէ. բոլոր ճու-
 տերը աքլար դուրս կը գան:

Նոր լուսնի առաջին չորեքշաբթին և ուրբաթը թուրքուն չեն քաղիլ: Լաւ չի չորնալ, խալտ կը մնալ:

Լուսնի 7-ին ու 9-ին սաղոց արին անելը լաւ չէ. խելքը կը կորցնէ:

Թէ որ լուսնի 1-ին, 11-ին և կամ 21-ին ծառ պատուաստեն, նոյն տարին պտուղ կը տալ:

Լուսնի ինին ցորեն կամ ինչ էլ լինի—ցանելը լաւ չէ. մօր կը բռնէ և լաւ բերք չի տալ:

Լուսնի ինին անտառից շէնքի փայտ կտրեն էլ լաւ չէ. ներսից կը ճիւղտուի: Լուսնի նորին էլ լաւ չէ կտրելը: Փայտ կտրելու ամենալաւ ժամանակը՝ երբ լուսնից մի չորեքշաբթի կամ ուրբաթ անցած լինի:

Ծառի պատուաստը առաւօտն են անում, որ արեւի հետ մեծնալ, ճաշից լիտոյ լաւ չէ անելը, պատուաստը վեր չի բարձրանալ, որովհետեւ արեւը ցածանում է:

Արեւի մայր մասնելուց լիտոյ մեռելը չեն թաղիլ:

Ահա և մի երկու աւանդութիւն արեւի ու լուսնի մասին:

1. Արեւն ու լուսնեակը իրար քոյր-եղբայր են: Մէկ օր մայրն առում է նրանց. «գնացէք աղբիւրից ինձ ջուր բերէք. ծարաւ եմ. որդի որ առաջ բերի, նրան պիտի օրհնեմ»: Երկուսն էլ վեր կենում, գնում են ջուրը: Եղբայրը քրոջից առաջ է անցնում և իր փարջը դնում է «վաքի» տակ, որ լցուի: Քոյրը լիակից դալիս, հասնում է եղբորը և նրանից ծածուկ, նրա փարջի տակը ծակում: Եղբոր փարջը լցում է, բայց ճանապարհին բոլոր ջուրը գնում է: Քոյրը լցնում է փարջը և գնում է, մօր օրհնութիւնը ստանում:

2. Սրանք էլ են պատմում արեւի ու լուսնեակի հէքեաթը, որի մէջ արեւ-քոյրիկը յայտնում է իր վախը գիշերը ման գալու և մարդկանց լոյս տալու, որովհետեւ երբ ինքը ցած նայիլիս է եղել, ամեն մարդ նրան է մօտիկ տուել: Արեւն էլ զանգրուով է մօրը, որի խօսքով աշնուհետեւ սկսել է ցերեկները ման գալ և մօր տուած սուր-սուր ասեղներով ծակել իրան նայողների աչքերը:

3. Լուսնի վալի մութ բծերը սրանք էլ բացատրում են

Նրա բարկացոտ մօր աստակով, որ խմորոտ ձեռքով խփել է իր լուսնկայ տղի երեսին:

Որևի ու լուսնի խաւարումը բացատրում են նրանով, որ մի վիշապ կայ. գալիս՝ աշխատում է բռնել նրանց, որ կուշ տայ: Հէնց որ բռնելու է լինում, խաւարում է պատահում: Քայց երկար չի քաշում, լուսատուն նրա ձեռքերից պրծնում, փախչում է: Վիշապը ամեն օր լուսանալուն պէս, արշալոյսի Հետ, Հետևում է արևին, որ բռնէ կուշ տայ. մինչի օրս չի կարողացել. մէկ օր պիտի գայ, որ կուշ տայ:

Աստղերի Համար ասում են, որ ամեն մարդ մի աստղ ունի երկնքում: Երբ մէկը մեռնում է, նրա աստղն էլ ընկնում է: Աստղերի մէջ նրանք աւելի լիշում են Լուսաստղ, Վեցուկ, Կշիռ և Բազուկ: Դրանց ծագելով ու դուրս գալով՝ իմանում են, թէ գիշերն ինչքան է անցել, ինչ ժամանակ է:

Պոչաւոր աստղի երևալը, արհաւիրքի նշան են Համարում: Ասում են՝ մեծ աղէտներ են պատահելու, թագաւոր է մեռնելու և այլն:

Յարդգողի Համար ասում են, թէ մէկ օր ջրաղացպանի մէկը գողցած ալիւրը տանելիս է լինում տուն. ճանապարհին թափւում է և թափածը երկնքի վրայ երևում: Իրանք Համաշէնցիները յարդգողին «քշտումալ» են ասում, որ բառացի նշանակում է՝ քրդի ամպ:

«Ամպորոտի» Համար ասում են, թէ Աստծու եղներն են «պօլօքում» (բղաւում), իրար Հարու տալիս ու կպչում:

Առաջին անգամ՝ գարնան, որոտի ձայնը լսելուն պէս՝ դալը վեր են գցում. ընկնելիս թէ որ բերանը վեր դառնայ՝ տարին առատ կլրինի. իսկ թէ որ ներքև՝ բերքը քիչ կլրինի:

Տանտիկինն էլ առաջին որոտի ձայնն առնելուն պէս, իր ճկոյթ մատի ծայրն է կծում, որ տարուայ մէջ խնոցին միշտ Հեշտ Հարուի:

Փայլակի Համար ասում են, թէ երկրի վրայ մի մեծ ձուկ

կալ, փորլի վրան մի փալլուն րան ունի. երբ մէջքի վրալ է ընկնում, նրա փորլի գոլնից երկինքը փալլատակում է:

Կալծակի Համար ասում են, թէ սատանի Համար է իջնում:

Անձրևի ժամանակ եթէ կառկարանքը դէպի վեր կանգնեցնեն, կարկուտ չի լինիլ, և մէկ էլ՝ եթէ յորդ անձրև լինի, կը խաղաղի:

Կարկտի ժամանակ թէ որ Յ Հատ կարկուտ կիսուի, կարկուտը կրկանոյնի:

Քամու Համար ասում են՝ եթէ նա երևար, բոլոր մարդկանց կը ջարդէր:

III. ԲՆՈՒՔԵԱՆ ՏԱՐՐԵՐԸ.

(Հողը, օդը, ջուրը և կրակը)

Ահա մի քանի աւանդութիւններ ու նախապաշարմունք բնութեան տարրերին վերաբերեալ:

Հող: Բաննլլա տրեխը մտած Հողը պէտք է արտում թափուի, թէ չէ արտի «րէ"րէ"քէ"թը» կը դնայ:

Քար: Միքիչ խելօքները կարծում են, թէ քարը Հողիցն է եղել. շատերն էլ ասում են, թէ մի ժամանակ Աստուած թափել է անձրևի նման: Կան ուրիշներն էլ, որոնք ասում են, թէ քարը առաջ ոչխար է եղել. վերջը Աստու Հրամանով քարացել է: Քարի մասին այս աւանդութիւններն են պատմում:

Աղամբ որ հերկ էր անում, Աստուած մի քար ցոյց տուեց նրան արտի մի կողմը, իրրև սահման, պատուիրելով, որ նրանից դէնը չանցնի: Բայց նախամարդը այս պատուէրն էլ չը պահեց. քարի միւս կողմն անցաւ: Դրանից է մնացել սահմանն անցնելը:

Պատմում են էլի, թէ քարը մի ժամանակ մեծամտելով՝ ալնքան է ուռել, մեծացել, Եր մարդուն տեղ չի մնացել: Դրա Համար Աստուած անիծել է նրան, և դրանից է որ Հիմա անշարժ ու անխախտ մնում է իր տեղին: